

4.5.2 Մարդասիրական օգնություն

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի կողմից տրամադրված բեռնամաքսային հայտարարագրերի տվյալների, 2006թ. հունվար-փետրվարին մարդասիրական օգնության կարգով, ՀՀ են ներմուծվել 1594.9 տոննա ապրանքներ, որոնց արժեքը կազմել է 2059.5 մլն. դրամ կամ 4.6 մլն. դոլար: Ստացված օգնության 25.5%-ը կազմել են թուղթը և թղթից իրերը, 18.4%-ը՝ մանածագործական իրերը, 17.6%-ը՝ սարքերը և ապարատները, 19.6%-ը՝ ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը:

Մարդասիրական օգնության ծավալն ըստ ապրանքային խմբերի

	2005թ. հունվար-փետրվար			2006թ. հունվար-փետրվար			Աճի տեմպը, %
	քանակը, տոննա	արժեքը		քանակը, տոննա	արժեքը		
		մլն. դրամ	հազ. դոլար		մլն. դրամ	հազ. դոլար	
<b>Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը</b>	<b>676.7</b>	<b>3712.3</b>	<b>7792.2</b>	<b>1594.9</b>	<b>2059.5</b>	<b>4572.3</b>	<b>58.7</b>
այդ թվում՝							
բուսական ծագման արտադրանք	2.7	0.7	1.5	49.3	43.6	96.8	6321.0
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	3.9	2.6	5.6	0.0	0.0	0.0	0.0
պատրաստի սննդի արտադրանք	4.2	9.9	20.8	15.8	54.3	121.3	583.0
հանքահումքային արտադրանք	0.0	0.0	0.0	305.5	23.0	51.1	~
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	9.3	122.2	255.2	8.1	101.4	224.2	87.8
պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	31.4	44.8	93.7	1.3	3.2	7.1	7.6
կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	0.0	0.0	0.0	0.1	1.4	3.2	~
փայտ և փայտյա իրեր	0.0	0.0	0.0	42.4	3.5	7.7	~
թուղթ և թղթից իրեր	0.8	0.9	1.8	19.4	524.4	1165.8	63048.5
մանածագործական իրեր	147.1	780.2	1618.9	116.1	378.8	840.7	51.9
կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	0.3	4.8	10.1	2.2	11.8	26.1	260.0
իրեր քարից, գիպսից, ցեմենտից	0.5	0.6	1.2	79.5	15.2	33.9	2826.9
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	17.4	17.1	35.9	863.6	265.8	592.2	1648.7
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	365.4	1628.4	3441.7	5.6	140.6	309.2	9.0
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	65.7	366.9	772.2	16.5	34.2	75.9	9.8
սարքեր և ապարատներ	34.8	424.2	895.7	34.0	363.1	806.4	90.0
տարբեր արդյունաբերական ապրանքներ	134.1	312.3	645.1	35.4	94.9	210.7	32.7

Մարդասիրական օգնությունը հիմնականում ստացվել է ԱՄՆ-ից (72.9%), Գերմանիայից (6.6%), Ֆրանսիայից (2.1%):